Health Net®

*Health Net Cal MediConnect Plan*
*(Medicare-Medicaid Plan)*

# 2021 թ. Մատակարարների և դեղատների հասցեագիրք

***Los Angeles** վարչաշրջան*
ՏԱՐԱԾՔ՝ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱՆ
**LOS ANGELES (ՀԱՐԱՎԱՅԻՆ/ԱՐԵՎՄՏՅԱՆ)**



*Coverage for*
*every stage of life™*

H3237_21_19587PPD_001_NM_ARM_Accepted_08182020

# Health Net Cal MediConnect Plan (Medicare-Medicaid Plan) | 2021 Մատակարարների և դեղատների հասցեագիրք

## Ներածություն

*Մատակարարների և դեղատների հասցեագիրքը* տրամադրում է տեղեկություններ Health Net Cal MediConnect-ի մատակարարի և դեղատան տեսակների մասին, թվարկում է ծրագրի բոլոր մատակարարներին և դեղատները՝ Հասցեագրքի ամսաթվի շրջանակներում: Ցուցակները պարունակում են մատակարարի և դեղատան հասցեն և կոնտակտային տվյալները, ինչպես նաև այլ մանրամասներ, օրինակ՝ աշխատանքային օրերը և ժամերը, մասնագիտական ուղղվածությունները և հմտությունները: Հիմնական տերմինները և դրանց բացատրություններն այբբենական կարգով տեղակայված են *Անդամների տեղեկագրքի* վերջին գլխում:

## Բովանդակություն

A. Հրաժարումներ.... 3

B. Մատակարարներ .... 7

B1. Հիմնական տերմիններ.... 7

B2. Առաջնային խնամքի մատակարարի (PCP) ընտրություն .... 10

B3. Երկարատև ծառայություններ ու աջակցություն (LTSS).... 12

B4. Ինչպես որոշել Health Net Cal MediConnect-ի ցանցի մատակարարներին .... 13

B5. Ինչպես գտնել Health Net Cal MediConnect-ի մատակարարներ ձեր տարածքում.... 15

B6. Ցանցային մատակարարների ցուցակ.... 16

C. Health Net Cal MediConnect-ի ցանցային մատակարարներ .... 17

D. Ցանցի դեղատների ցուցակ .... 21

D1. Ինչպես որոշել Health Net Cal MediConnect-ի ցանցի դեղատները .... 22

D2. Դեղատոմսերի երկարաժամկետ պաշարներ.... 23

E. Health Net Cal MediConnect-ի ցանցի դեղատներ .... 24

E1. Փոստով պատվերի դեղատուն.... 25

E2. Տնային ներարկման դեղատներ.... 26

E3. Երկարատև խնամքի դեղատներ .... 27

E4. Մասնագիտացված դեղատներ .... 28

## A. Հրաժարումներ

- Health Net Community Solutions, Inc.-ն առողջապահական ծրագիր է, որը պայմանագրեր ունի և Medicare-ի, և Medi-Cal-ի հետ՝ տրամադրելու նպաստներ այդ երկու ծրագրերին անդամագրված անձանց:

- Այս Հասցեագիրքը թվարկում է առողջական խնամքի մասնագետներին (ինչպիսիք են՝ բժիշկները, մասնավոր պրակտիկայով զբաղվող բուժքույրերը և հոգեբանները), հաստատություններ (ինչպիսիք են՝ հիվանդանոցները կամ կլինիկաները) և աջակից մատակարարներ (ինչպիսիք են՝ Չափահասների ցերեկային առողջության և Տնային առողջության մատակարարները), որոնց կարող եք այցելել որպես Health Net Cal MediConnect-ի անդամ: Մենք նաև թվարկում ենք այն դեղատները, որոնցից կարող եք օգտվել ձեր դեղատոմսային դեղերը ստանալու համար:

- Այս Հասցեագրքում մենք հղում կկատարենք այս խմբերին որպես «ցանցային մատակարարներ»: Այս մատակարարները մեզ հետ ունեն կնքած պայմանագիր՝ ձեզ ծառայություններ մատուցելու համար: Սա Health Net Cal MediConnect-ի ցանցային մատակարարների ցուցակն է California-ի Los Angeles վարչաշրջանի համար:

- Արտացանցային/պայմանագիր չունեցող մատակարարները չեն կրում պարտավորություն՝ բուժելու Health Net Cal MediConnect Plan-ի անդամներին՝ բացառությամբ արտակարգ իրավիճակի դեպքերից: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայությունների բաժնի հեռախոսահամարով կամ ընթերցել ձեր *Անդամների տեղեկագիրքը*, ներառյալ ծախսերի բաշխումը, որը կիրառելի է արտացանցային ծառայությունների համար:

- Դուք կարող եք ստանալ այս փաստաթուղթն անվճար այլ ձևաչափերով, ինչպիսիք են՝ խոշոր տառատեսակը, բրեյլը կամ ձայնագրությունը: Զանգահարեք 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից մինչև 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, ձեզ կարող են խնդրել հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: Զանգն անվճար է:

- Health Net Cal MediConnect Plan (Medicare-Medicaid Plan) ցանկանում է հավաստիանալ, որ դուք հասկանում եք ձեր առողջապահական ծրագրի տեղեկատվությունը: Մենք կարող ենք նյութեր ուղարկել այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, եթե խնդրեք այն: Սա կոչվում է «մշտական խնդրանք»: Մենք կարձանագրենք ձեր ընտրությունը:

Խնդրում ենք զանգահարել մեզ, եթե.

- Ցանկանում եք ստանալ նյութերն արաբերեն, հայերեն, կամբոջերեն (քմեր), չինարեն (ավանդական), պարսկերեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, թագալոգ, վիետնամերեն լեզուներով կամ այլընտրանքային ձևաչափով: Կարող եք խնդրել այս լեզուներից մեկն այլընտրանքային ձևաչափով:
  կամ
- Ցանկանում եք փոխել լեզուն կամ ձևաչափը, որով մենք ձեզ նյութեր ենք ուղարկում:

Եթե ձեր ծրագրի նյութերը հասկանալու հարցում օգնության կարիք ունեք, խնդրում ենք դիմել Health Net Cal MediConnect-ի Անդամների ծառայությունների բաժին 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711): Աշխատանքային ժամերն են՝ 8 a.m.-ից մինչև 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

- ❖ Այս Հասցեագիրքը պարունակում է թե Medicare-ի, թե Medicaid-ի ծառայությունների մատակարարներին:
- ❖ ATTENTION: If you speak a language other than English, language assistance services, free of charge, are available to you. Call 1-855-464-3571 (TTY: 711) from 8 a.m. to 8 p.m., Monday through Friday. After hours, on weekends and on holidays, you can leave a message. Your call will be returned within the next business day. The call is free.
- ❖ ATENCIÓN: Si usted habla español, hay servicios de asistencia de idiomas disponibles para usted sin cargo. Llame al 1-855-464-3571 (TTY: 711) de 8:00 a. m. a 8:00 p. m., de lunes a viernes. Después del horario de atención, los fines de semana y los días feriados puede dejar un mensaje. Le devolveremos la llamada el siguiente día hábil. La llamada es gratuita.
- ❖ PAALALA: Kung nagsasalita ka ng Tagalog, available sa inyo ang mga serbisyo ng tulog sa wika, nang walang singil. Tumawag sa 1-855-464-3571 (TTY: 711) mula 8 a.m. hanggang 8 p.m., Lunes hanggang Biyernes. Paglipas ng mga oras ng negosyo, tuwing Sabado at Linggo at sa pista opisyal, maaari kang mag-iwan ng mensahe. Ang iyong tawag ay ibabalik sa loob ng susunod na araw ng negosyo. Libre ang tawag.

- ВНИМАНИЕ: Если вы говорите по-русски, мы можем предложить вам бесплатные услуги переводчика. Звоните по телефону 1-855-464-3571 (линия TTY: 711). Вы можете получить необходимую информацию непосредственно у сотрудника плана с понедельника по пятницу с 8:00 часов утра до 8:00 часов вечера. В нерабочее время, а также в выходные и праздничные дни, вы можете оставить сообщение. Вам перезвонят на следующий рабочий день. Звонок бесплатный.

- XIN LƯU Ý: Nếu quý vị nói tiếng Việt, chúng tôi sẵn có dịch vụ hỗ trợ ngôn ngữ miễn phí dành cho quý vị. Hãy gọi 1-855-464-3571 (TTY: 711) từ 8 giờ sáng đến 8 giờ tối, từ thứ Hai đến hết thứ Sáu. Sau giờ làm việc, vào các ngày cuối tuần và ngày lễ, quý vị có thể để lại tin nhắn. Cuộc gọi của quý vị sẽ được hồi đáp vào ngày làm việc hôm sau. Cuộc gọi này miễn phí.

- تنبيه: إذا كنت تتحدث العربية، تتوافر لك خدمات المساعدة اللغوية مجانًا. يُرجى الاتصال بالرقم 1-855-464-3571 (TTY: 711)، من الساعة 8:00 صباحًا حتى 8:00 مساءً، من يوم الاثنين إلى الجمعة، وللاتصال في غير أوقات الدوام الرسمي، أيام الأجازات والعطلات ، يمكنك ترك رسالة. سنرد على مكالمتك في يوم العمل التالي. هذه المكالمة مجانية.

- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Եթե Հայերեն եք խոսում, անվճար լեզվական օգնության ծառայություններ են հասնում Ձեզ : Զանգահարեք 1-855-464-3571 (TTY՝ 711): Մի անձ այստեղ է Ձեզ հետ զրուցելու նպատակով երկուշաբթիից ուրբաթ, կ.ա. 8:00-ից կ.հ. 8:00-ը: Աշխատանքային ժամերից անց, հանգստյան օրերին եւ տոներին, կարող եք թողնել հաղորդագրություն: Ձեր զանգը կվերադարձվի հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: Հեռախոսազանգն անվճար է:

- **請注意**：如果您使用中文，您可以免費獲得語言援助服務。請致電 1-855-464-3571 (聽障專線：711)。週一至週五，上午8點到下午8點。非營業時間、週末及假日，您可以留言。我們會在下一個工作日給您回電。此專線為免付費電話。

- ចំណាប់អារម្មណ៍: បើសិនអ្នកនិយាយភាសាខ្មែរ សេវាជំនួយភាសាឥតគិតថ្លៃ គឺមានសំរាប់អ្នក។ ទូរស័ព្ទទៅលេខ 1-855-464-3571 (TTY: 711) ពីម៉ោង 8 ព្រឹក ដល់ 8 យប់ ថ្ងៃច័ន្ទ រហូតថ្ងៃសុក្រ។ បន្ទាប់ពីម៉ោងធ្វើការ នៅចុងអាទិត្យ និងថ្ងៃបុណ្យ អ្នកអាចទុកសារស័ព្ទបាន។ អ្នកនឹងត្រូវបានទូរស័ព្ទមកវិញ នៅថ្ងៃធ្វើការបន្ទាប់ទៀត។ ការហៅនេះ គឺឥតចេញថ្លៃឡើយ។

- توجه: اگر به فارسی صحبت می کنید، خدمات امداد زبانی به طور رایگان در اختیار شما می باشند. با شماره (TTY: 711) 1-855-464-3571 از ساعت 8:00 صبح تا 8:00 شب، دوشنبه تا جمعه تماس بگیرید. بعد از ساعات کاری، در آخر هفته ها و تعطیلات رسمی، می توانید پیام بگذارید. به تماس تلفنی شما در روز کاری بعدی پاسخ داده خواهد شد. این تماس رایگان است.

- *알림: 귀하께서 한국어를 사용하시는 경우 언어 지원 서비스를 무료로 이용하실 수 있습니다. 1-855-464-3571 (TTY: 711)번으로 월요일 - 금요일, 오전 8시부터 오후 8시까지 전화하십시오. 영업시간 이후, 주말 및 공휴일에는 메시지를남기실 수 있습니다. 다음 영업일에 저희가 귀하께 전화를 드리겠습니다. 안내전화는 무료입니다.*

- Այս ցուցակը թարմացվել է այն ամսաթվով, երբ դուք որոնում եք կատարում, սակայն նկատի ունեցեք հետևյալը.
  - Health Net Cal MediConnect-ի որոշ ցանցային մատակարարներ, հնարավոր է՝ ավելացվել կամ հեռացվել են մեր ցանցից այս Հասցեագիրքը հրատարակելուց հետո:
  - Health Net Cal MediConnect-ի մեր ցանցի որոշ մատակարարներ, հնարավոր է՝ այլևս չեն ընդունում նոր անդամներ: Եթե խնդիր ունեք գտնելու մատակարար, ով ընդունում է նոր անդամներ, զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), և մենք կօգնենք ձեզ:
  - Health Net Cal MediConnect-ի ցանցային մատակարարների մասին ամենաթարմ տեղեկությունները ստանալու համար այցելեք mmp.healthnetcalifornia.com/findadoctor կայքը կամ զանգահարեք 1-855-464-3571 (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է:

Health Net Cal MediConnect-ի ցանցի բժիշկները և այլ առողջական խնամքի մասնագետները նշված են *Առաջնային խնամքի մատակարարը և Մասնագիտացված բաժինների* էջերում: Մեր ցանցի դեղատները նշված են *Դեղատուն* բաժնում:

## B. Մատակարարներ

### B1. Հիմնական տերմիններ

Այս բաժնում բացատրված են հիմնական տերմինները, որոնք կան *Մատակարարների և դեղատների հասցեագրքում:*

- **Մատակարարներն** առողջական խնամքի մասնագետներ են և աջակցության տրամադրողներ, օրինակ՝ բժիշկներ, բուժքույրեր, դեղագործներ, թերապևտներ և այլ մարդիկ, որոնք խնամք և ծառայություններ են տրամադրում: **Ծառայությունները** ներառում են բժշկական խնամքը, երկարատև ծառայություններն ու աջակցությունը (LTSS), պաշարները, դեղատոմսային ու առանց դեղատոմսի վաճառվող դեղերը, սարքավորումներն ու այլ ծառայությունները:
  - Մատակարարներ տերմինը նաև ներառում է հաստատություններ, օրինակ՝ հիվանդանոցներ, կլինիկաներ ու այլ վայրեր, որոնք տրամադրում են բժշկական ծառայություններ, բժշկական սարքավորումներ և երկարատև ծառայություններ ու աջակցություն:
  - Մատակարարները, որոնք մեր ծրագրի ցանցի մասն են, կոչվում են ցանցային մատակարարներ:
- **Ցանցային մատակարարները** մատակարարներն են, որոնք պայմանագիր ունեն մեզ հետ՝ մեր ծրագրի անդամներին ծառայություններ մատուցելու համար: Մեր ցանցի մատակարարները ձեզ տրամադրած խնամքի համար սովորաբար հաշիվներն ուղղակիորեն մեզ են ուղարկում: Երբ դուք ցանցային մատակարարի եք այցելում, դուք սովորաբար ոչինչ չեք վճարում ապահովագրված ծառայությունների համար:
- **Առաջնային խնամքի մատակարարն** (PCP) ընտանեկան պրակտիկայի բժիշկ է, ընդհանուր պրակտիկ բժիշկ, մանկաբույժ, առաջնային խնամքի կլինիկա կամ ներքին բժշկության բժիշկ, ով ձեզ առօրյա առողջական խնամք է տրամադրում: Ձեր PCP-ն պահպանում է ձեր բժշկական արձանագրությունները և ժամանակի ընթացքում տեղեկանում ձեր առողջական կարիքներին: Ձեր PCP-ն ձեզ նաև **ուղեգիր** կտրամադրի, եթե ձեզ անհրաժեշտ լինի այցելել մասնագետի կամ այլ մատակարարի:

- **Մասնագետները** բժիշկներ են, որոնք առողջական խնամքի ծառայություններ են տրամադրում հատուկ հիվանդության կամ մարմնի որոշակի մասի համար: Մասնագետների շատ տեսակներ կան: Ահա մի քանի օրինակներ.
  - Ուռուցքաբանները բուժում են քաղցկեղ ունեցող հիվանդներին:
  - Սրտաբանները բուժում են սրտի վիճակներ ունեցող հիվանդներին:
  - Օրթոպեդները բուժում են ոսկրերի, հոդերի կամ մկանների որոշակի վիճակներ ունեցող հիվանդներին:
- Բժշկական խումբը համատեղ աշխատող և մեր ծրագրի հետ պայմանագիր ունեցող PCP-ների, մասնագետների և առողջական խնամքի այլ մատակարարների մի խումբ է:
- Մասնագետին կամ որևէ մեկին, որը ձեր PCP-ն չէ, այցելելու համար ձեզ, հնարավոր է, **ուղեգիր** անհրաժեշտ լինի: **Ուղեգիր** նշանակում է, որ առաջնային խնամքի մատակարարը (PCP) պետք է հավանություն տա, նախքան դուք կարող եք այցելել մեկին, ով ձեր PCP-ն չէ: Եթե դուք ուղեգիր չստանաք, Health Net Cal MediConnect-ը կարող է չապահովագրել այդ ծառայությունը:
  - Ձեր ցանցի PCP-ից ուղեգրի կարիք չկա հետևյալ դեպքերում՝
    - Շտապ օգնության խնամք,
    - Հրատապ անհրաժեշտ խնամք,
    - Երիկամների դիալիզի ծառայություններ, որոնք ստանում եք Medicare-ով վկայագրված դիալիզի հաստատությունից, երբ դուք ժամանակավորապես գտնվում եք ծրագրի սպասարկման տարածքից դուրս, կամ
    - Կանանց առողջապահության մասնագետի ծառայություններ:
  - Բացի դրանից, եթե դուք իրավասու եք Հնդկացիների առողջական մատակարարներից ծառայություններ ստանալու համար, կարող եք այցելել այդ մատակարարներին առանց ուղեգրի: Մենք պետք է վճարենք Հնդկացիների առողջության մատակարարին այդ ծառայությունների համար, անգամ եթե դրանք մեր ծրագրի ցանցից դուրս են:
  - Ուղեգրերի մասին լրացուցիչ տեղեկությունները հասանելի են *Անդամների տեղեկագրքի* Գլուխ 3-ում:

- Դուք նաև կարող եք դիմել խնամքի համակարգողին և խնամքի թիմին, որոնք ընտրվում են ձեր օգնությամբ:

    - **Խնամքի համակարգողն** օգնում է ձեզ կառավարել ձեր բժշկական մատակարարներին և ծառայությունները:

    - Ձեր **Խնամքի թիմը** մարդկանց խումբ է, որոնք կաշխատեն ձեզ հետ՝ մշակելու Անհատականացված խնամքի ծրագիր՝ ձեր առողջական և աջակցման կարիքները բավարարելու, ձեր անհատական նախընտրությունները և նպատակները ներառելու համար:

    - Ձեր **Խնամք թիմը** սկսվում է ձեր Առաջնային խնամքի մատակարարից և Խնամքի համակարգողից: Թիմի այլ անդամները կարող են ներառել վարքագծային առողջության կամ սոցիալական ծառայությունների փորձագետ, բժիշկ-մասնագետ կամ դիետոլոգ:

    - **Անհատական խնամքի ծրագիրն** առողջական խնամքի նպատակների ցուցակն է, որոնց վրա դուք համաձայնել եք աշխատել ձեր Խնամքի թիմի հետ: Այս նպատակները ներառում են՝

        - Ձեր ֆիզիկական առողջական խնամքը,

        - Ձեր հոգեկան առողջական խնամքը,

        - Երկարատև ծառայություններն ու աջակցությունը: (Սրանք այն մարդկանց համար են, որոնք օգնության կարիք ունեն ամենօրյա գործողություններ կատարելիս, օրինակ՝ լոգանք ընդունելը, հագնվելը, սնունդ պատրաստելը և դեղորայք ընդունելը):

- Խնամքի թիմի յուրաքանչյուր անդամ աշխատում է համատեղ՝ ապահովելու, որ խնամքը համակարգվի: Սա նշանակում է, որ նրանք ապահովում են թեստերի և լաբորատոր անալիզների մեկ անգամ անելը, իսկ հետո արդյունքների տրամադրումը համապատասխան մատակարարներին: Սա նաև նշանակում է, որ ձեր PCP-ն պետք է իմանա բոլոր դեղերը, որոնք ընդունում եք, որպեսզի կարողանա նվազեցնել ցանկացած բացասական ազդեցություն: Նախքան որևէ այլ մատակարարի հետ ձեր բժշկական տեղեկությունները կիսելը, ձեր PCP-ին միշտ կստանա ձեր թույլտվությունը:

## B2. Առաջնային խնամքի մատակարարի (PCP) ընտրություն

Դուք կարող եք ծառայություններ ստանալ ցանկացած մատակարարից, ով մեր ցանցում է և ընդունում է նոր անդամներ:

Առաջինը, դուք պետք է ընտրեք Առաջնային խնամքի մատակարար: Հնարավոր է, որ որպես ձեր PCP կարողանաք ունենալ մասնագետի: Մասնագետը պետք է ցանկանա ու կարողանա ձեզ անհրաժեշտ խնամք տրամադրել: Եթե ձեզ անհրաժեշտ է խնդրել մասնագետի որպես ձեր PCP, խնդրում ենք զանգահարել մեր Անդամների ծառայությունների բաժին 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է:

Մեր ծրագրի PCP-ները կցված են բժշկական խմբերին: Երբ PCP եք ընտրում, դուք նաև ընտրում եք նրան կցված բժշկական խումբը: Սա նշանակում է, որ ձեր PCP-ն ձեզ ուղարկելու է այն մասնագետների մոտ ու ծառայությունների համար, որոնք նույնպես կցված են իր բժշկական խմբին:

- Եթե կա որոշակի մասնագետ կամ հիվանդանոց, որն ուզում եք օգտագործել, կարևոր է իմանալ՝ արդյոք նրանք կցված են ձեր PCP-ի բժշկական խմբին: Կարող եք փնտրել այս հասցեագրքում կամ խնդրել Health Net Cal MediConnect-ի Անդամների ծառայությունների բաժնին ստուգել՝ պարզելու, թե արդյոք ձեր նախընտրած PCP-ն տրամադրում է ուղեգրեր այդ մասնագետի մոտ կամ օգտագործում է այդ հիվանդանոցը:
- Եթե դուք չմնաք ձեր PCP-ի բժշկական խմբի ներսում, Health Net Cal MediConnect-ը կարող է չապահովագրել այդ ծառայությունը:

PCP ընտրելու համար անցեք մատակարարների ցուցակ և ընտրեք մատակարար՝

- որից դուք օգտվում եք հիմա, **կամ**
- ում խորհուրդ է տվել այնպիսի անձ, ում դուք վստահում եք, **կամ**
- ում գրասենյակները ձեզ հեշտ է այցելել:

- Եթե ձեզ օգնություն է անհրաժեշտ PCP-ն ընտրելու համար, զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է: Կամ այցելեք՝ mmp.healthnetcalifornia.com:
- Եթե հարցեր ունեք՝ արդյոք մենք կվճարենք ձեր ուզած կամ ձեզ անհրաժեշտ բժշկական ծառայության կամ խնամքի համար, զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին և հարցրեք, **նախքան** ծառայությունը կամ խնամքը ստանալը:

## B3. Երկարատև ծառայություններ ու աջակցություն (LTSS)

Որպես Health Net Cal MediConnect-ի անդամ՝ դուք միգուցե կարողանաք ստանալ երկարատև ծառայություններ ու աջակցություն (LTSS), օրինակ՝ Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS), Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP) և երկարաժամկետ խնամակալական խնամք բուժքույրական հաստատություններում: LTSS-ն օգնում է անդամներին, որոնք օգնության կարիք ունեն ամենօրյա գործողություններ կատարելիս, օրինակ՝ լոգանք ընդունելը, հագնվելը, սնունդ պատրաստելը և դեղորայք ընդունելը: Այս ծառայությունների մեծ մասը տրամադրվում է ձեր տանը կամ ձեր համայնքում, սակայն կարող են նաև տրամադրվել ծերանոցում կամ հիվանդանոցում:

Այս ծառայությունները ներառում են Չափահասների համայնքահեն ծառայությունները (CBAS):

CBAS-ը համայնքահեն ցերեկային առողջական ծրագիր է, որը ծառայություններ է տրամադրում տարեց անձանց և չափահասներին, որոնք ունեն քրոնիկ բժշկական, ճանաչողական կամ հոգեկան առողջության վիճակներ և/կամ հաշմանդամություններ, որոնք ենթակա են հաստատությունների կողմից խնամք ստանալու ռիսկին:

CBAS-ին դիմելու համար, խնդրում ենք կապվել Health Net Cal MediConnect-ի Անդամների ծառայությունների բաժնի հետ 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը:

Health Net Cal MediConnect-ի կողմից տրամադրվող այլ երկարատև ծառայություններն ու աջակցությունը ներառում են Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիրը (MSSP) և երկարաժամկետ խնամակալական խնամքը բուժքույրական հաստատություններում: MSSP-ն ծառայություններ է մատուցում 65 և ավելի բարձր տարիքի անձանց: Տրամադրելով երկարաժամկետ խնամակալական խնամք բուժքույրական հաստատություններում՝ առողջապահական ծրագիրն ապահովում է, որպեսզի խնամքը լինի շարունակական, և ցանկացած անցում լինի պլանավորված ինչպես հարկն է:

Այս ծառայությունների ամբողջական ցուցակը հասանելի է *Անդամների տեղեկագրքի* Գլուխ 4-ում:

## B4. Ինչպես որոշել Health Net Cal MediConnect-ի ցանցի մատակարարներին

Դուք պետք է ստանաք ձեր բոլոր ապահովագրված ծառայությունները մեր ցանցի մատակարարներից, որոնք կցված են ձեր PCP-ի բժշկական խմբին: Եթե դուք այցելեք մատակարարների, որոնք Health Net Cal MediConnect-ի ցանցում չեն և կցված չեն ձեր PCP-ի բժշկական խմբին (առանց նախօրոք լիազորման կամ մեր հաստատման), դուք ստիպված կլինեք վճարել հաշիվը:

> **Նախօրոք լիազորումը** հավանություն է Health Net Cal MediConnect-ից, նախքան դուք կարող եք ստանալ որոշակի ծառայություն կամ դեղորայք, կամ այցելել արտացանցային մատակարարի: Health Net Cal MediConnect-ը կարող է չապահովագրել ծառայությունը կամ դեղը, եթե հավանություն չստանաք:

Այս կանոնից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ձեզ անհրաժեշտ է հրատապ կամ շտապ օգնության խնամք կամ դիալիզ և չեք կարող ստանալ ծառայությունը ծրագրի մատակարարից, օրինակ՝ երբ հեռու եք ձեր տանից: Դուք նաև կարող եք ծրագրից և ձեր PCP-ի բժշկական խմբից դուրս գալ, եթե Health Net Cal MediConnect-ը նախ ձեզ թույլտվություն տա:

Որևէ մեկին, ով Առաջնային խնամքի մատակարար չէ, այցելելու համար ձեզ, հնարավոր է, ուղեգիր անհրաժեշտ լինի: Ուղեգրերի մասին մանրամասն տեղեկություններ կան Բաժին B1-ում, այս Հաւցեագրքի Հիմնական տերմիններ բաժնում:

- Տարվա ընթացքում ցանկացած ժամանակ ցանցի ներսում դուք կարող եք փոխել մատակարարներին: Եթե դուք այցելում էիք որոշակի ցանցային մատակարարին, պարտադիր չէ, որ շարունակեք այցելել այդ նույն մատակարարին: Որոշ մատակարարի համար ձեզ ուղեգիր կպահանջվի ձեր PCP-ից:
- Հիշեք, որ մեր ծրագրի PCP-ները կցված են բժշկական խմբերին: Երբ դուք PCP եք փոխում, հնարավոր է, որ նաև փոխում եք բժշկական խումբը: Երբ դուք փոփոխություն եք խնդրում, անպայման տեղեկացրեք Անդամների ծառայությունների բաժնին, եթե մասնագետի եք այցելում կամ ստանում որևէ այլ ապահովագրված ծառայություններ, որոնց համար PCP-ի հաստատում է հարկավոր: Անդամների ծառայությունների բաժինը կապահովի, որ կարողանաք շարունակել ձեր մասնագիտական խնամքը կամ այլ ծառայությունները, որոնք ստանում էիք, երբ փոխում եք ձեր PCP-ին:

- Health Net Cal MediConnect-ը համագործակցում է մեր ցանցի բոլոր մատակարարների հետ՝ հոգալու հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Եթե կիրառելի է, Հասցեագրքի ցուցակը պարունակում է տեղեկություններ այն հարմարությունների մասին, որոնք տրամադրվում են նրանց կողմից:
- Եթե ձեզ անհրաժեշտ է այցելել մատակարարի, և դուք համոզված չեք՝ արդյոք նրանք առաջարկում են ձեզ անհրաժեշտ հարմարությունները, Health Net Cal MediConnect-ը կարող է օգնել ձեզ: Օգնության համար խոսեք ձեր խնամքի համակարգողի հետ կամ զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711):

## B5. Ինչպես գտնել Health Net Cal MediConnect-ի մատակարարներ ձեր տարածքում

Այս հասցեագիրքը դասակարգված է ըստ մատակարարների և գտնվելու վայրի: Մատակարարների տեսակները ներառում են Առաջնային խնամքի մատակարարներ, մասնագետներ, հիվանդանոցներ, բուժքույրական հաստատություններ, հմուտ բուժքույրական հաստատություններ, տնային առողջության գործակալություններ, հոգեկան առողջության մատակարարներ, երկարատև ծառայություններ ու աջակցություն, ասեղնաբուժության մատակարարներ և տեսողության մատակարարներ: Առաջնային խնամքի մատակարարները և մասնագետները թվարկված են ըստ հանձնարարված բժշկական խմբի, այնուհետև՝ քաղաքի կամ ավանի: Մնացած բոլոր մատակարարների տեսակները նշված են յուրաքանչյուր բաժնում ըստ քաղաքի կամ ավանի:

Եթե օգնության կարիք ունեք մատակարար գտնելու համար, զանգահարեք 1-855-464-3571 (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է:

## B6. Ցանցային մատակարարների ցուցակ

Health Net Cal MediConnect-ի ցանցային մատակարարների այս Հասցեագիրքը պարունակում է.

- **Առողջական խնամքի մասնագետներ,** ներառյալ առաջնային խնամքի բժիշկներ, մասնագետներ, բուժքույր-պրակտիկ բժիշկներ, հոգեբաններ և դեղատներ, և
- **Հաստատություններ**, այդ թվում հիվանդանոցներ, բուժքույրական հաստատություններ, հմուտ բուժքույրական հաստատություններ, հոգեկան առողջության հաստատություններ, և
- **Աջակցող մատակարարներ**, այդ թվում՝ տարեցների ցերեկային ծառայություններ, աջակցում կենսակերպին, հաճախորդներին ուղղված ծառայություններ, տուն առաքվող սնունդ, տնային առողջության գործակալություններ, և
- **Տեսողության մատակարարներ, և**
- **Ասեղնաբուժության մատակարարներ:**

Մատակարարները նշված են այբբենական կարգով՝ ըստ ազգանվան: Ի լրումն կոնտակտային տվյալների՝ մատակարարների ցուցակները նաև ներառում են մասնագիտությունները և հմտությունները, օրինակ՝ լեզուները, որոնցով նրանք խոսում են, կամ մշակութային կոմպետենտության վերապատրաստումը:

**Մշակութային կոմպետենտության վերապատրաստումը** մեր առողջական խնամքի մատակարարներին տրամադրում է լրացուցիչ հրահանգներ, որոնք օգնում են նրանց ավելի լավ հասկանալ ձեր պատմությունը, արժեքները և հավատալիքները՝ հարմարեցնելու ծառայությունները՝ ձեր սոցիալական, մշակութային և լեզվական կարիքները բավարարելու համար:

## C. Health Net Cal MediConnect-ի ցանցային մատակարարներ

Այս հասցեագրքի մատակարարները դասավորված են այբբենական կարգով՝ ըստ բժշկական խմբի: Դուք կարող եք ծառայություններ ստանալ ցուցակի մատակարարներից ցանկացածից: Որոշ ծառայությունների դեպքում դուք միգուցե ուղեգրի կարիք ունենաք ձեր PCP-ից:

# Մատչելիության տեղեկություններ

Ստորև ներկայացված է տեղեկություն, որն օգտագործվում է մատակարարների հասցեագրքում՝ նշելու մատակարարի գրասենյակի կամ շենքի մատչելիությունը: Այս տեղեկությունը խոստում չէ, որ յուրաքանչյուր բժիշկ միշտ կունենա մատչելիություն, որի կարիքը դուք կունենաք: Եթե դուք հաշմանդամություն ունեք, դուք պետք է զանգահարեք բժշկի գրասենյակ՝ մատչելիության ձեր կարիքների մասին խոսելու համար:

Մատչելիության պահանջներ.

| **Համապատասխանում է բոլոր չափանիշներին.** | **Համապատասխանում է որոշ չափանիշներին.** | **Ոչ մի չափանիշի չի համապատասխանում.** | **Մանրամասները ստացվում են.** |
|---|---|---|---|
| եթե մատակարարը համապատասխանում է հաշմանդամության մատչելիության բոլոր (49) Կրիտիկական տարրերին (CE) չորս (4) հիմնական ոլորտներում՝ Կայանատեղի, շենքը դրսից, շենքը ներսից և ծրագրային մատչելիություն: | եթե մատակարարը չի համապատասխանում CE-ներից 1-ին կամ մեկից ավելիին: | եթե մատակարարը զեկուցում է, որ բոլոր CE-ների դեպքում հաշմանդամների համար մատչելիություն չկա: | եթե 4 հիմնական ոլորտներից ոչ մեկին աջակցելու համար տվյալներ չկան: |

| Ցուցանիշ | Սահմանում | Չափանիշ |
|---|---|---|
| P | Կայանատեղի | Կայանատեղիները և ֆուրգոնների տարածք(ներ)ը մատչելի են: Շենքին մոտ կայանատեղի մայթերի եզրերը, հանրային փոխադրամիջոցները և դեպի շենքի մուտքի մայթերն ունեն թեքահարթակներ: |
| EB | Շենքը դրսից | Շենքն ունի մատչելի թեքահարթակ: Շենքի թեքահարթակները և մնացած հարթակները բավարար լայն են անվասայլակի/սկուտերի համար: Թեքահարթակի երկու կողմերում կան բազրիքներ: Դռները բավարար լայն են անվասայլակի/սկուտերի մուտքի համար: Դռներն ունեն բռնակներ, որոնք հեշտությամբ են բացվում: |
| IB | Շենքը ներսից | Դռները բավարար լայն են անվասայլակի/սկուտերի մուտքի համար, ունեն բռնակներ, որոնք հեշտությամբ են բացվում: Կան ներքին թեքահարթակներ՝ բազրիքներով: Եթե կա վերելակ, այն պետք է լինի անվճար՝ հանրային օգտագործման համար: Վերելակն ունի հեշտ լսելի ազդանշաններ և բրեյլի կոճակներ, որոնք նույնպես մատչելի են: Վերելակը բավարար լայն է անվասայլակի/սկուտերի պտտման համար: Սանհանգույցը մատչելի է, ունի բավականին լայն դռներ անվասայլակի/սկուտերի համար, հեշտ բացվող են: Գրասենյակներն ունեն մատչելի սարքավորումներ և բաց տարածք, որտեղ սարքավորումները նախատեսված են անվասայլակների կամ սկուտերների օգտագործողների կողմից կողքով անցնելու համար: Ըստ անհրաժեշտության գործում են բարձրացնող սարքավորումներ: Եթե գրասենյակում կա նստարանով վերելակ, այն կարող է օգտագործվել առանց օգնության: |

*(Այս բաժինը շարունակվում է հաջորդ էջում):*

*(շարունակվում)*

| Յուցանիշ | Սահմանում | Չափանիշ |
|---|---|---|
| PA | Ծրագրային մատչելիություն | Ծրագրային մատչելիությունը ներառում է, բայց չի սահմանափակվում՝ հասանելի հաղորդակցություն և նյութեր այլ ձևաչափերով, որոնք տրվում են ժամանակին, անձնակազմի օգնություն՝ հետագա այցելությունների պլանավորմամբ, և այլ հաշմանդամությանն առնչվող աջակցություն (հաշմանդամություն ունեցող մարդիկ, որոնք չեն կարող սպասել սպասասրահներում, տեսնում են բժշկին անմիջապես): |
| ~ | Rx | Այս դեղատունը կարող է տրամադրել օրվա ընդլայնված պաշար: |
| + | Նոր բուժառուներ | Բժիշկը ներկայումս ընդունում է նոր բուժառուներ: |
| # | Միայն առկաներ | Բժիշկը ներկայումս ընդունում է միայն արդեն առկա բուժառուներին: |
| * | Բուժառուներ չկան | Բժիշկն ներկայումս չի ընդունում բուժառուներ: |
|  | Ավտոբուսի երթուղին | Մատակարարը նշել է այս տեղադրությունը որպես ավտոբուսի երթուղի: |

Health Net Community Solutions, Inc.-ը չի կարող երաշխավորել մատակարարի կողմից ինքնուրույն տրամադրված հաշմանդամության մատչելիության մասին տեղեկությունների ճշգրտությունը, քանի որ այն չի ստուգվել առողջապահական ծրագրի կողմից անձամբ կատարվող Տեղավայրի մատչելիության վերանայման (ASR) միջոցով: Անդամներին խորհուրդ է տրվում կապվել մատակարարի հետ նախապես՝ տեղեկանալու հաշմանդամության մատչելիության մասին, ինչպես նաև անմիջապես կապվել առողջապահական ծրագրին, եթե ինքնուրույն տրամադրված տեղեկությունները ճշգրիտ չեն:

## D. Ցանցի դեղատների ցուցակ

Հասցեագրքի այս մասը տրամադրում է Health Net Cal MediConnect-ի ցանցի դեղատների ցուցակը: Ցանցի այս դեղատներն այն դեղատներն են, որոնք համաձայնել են աշխատել մեզ հետ՝ ձեզ, որպես մեր ծրագրի անդամի, դեղատոմսային դեղեր տրամադրելու համար:

- Health Net Cal MediConnect-ի անդամները պետք է օգտագործեն ցանցի դեղատները՝ դեղատոմսային դեղեր ստանալու համար:
  - Դուք պետք է օգտվեք ցանցի դեղատներից՝ բացառությամբ արտակարգ իրավիճակների կամ հրատապ խնամքի իրավիճակների:
  - Եթե դուք գնում եք արտացանցային դեղատուն դեղատոմսերի համար, երբ արտակարգ իրավիճակ չկա, ապա դուք ստիպված կլինեք վճարել ծառայության համար ձեր գրպանից: Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք Health Net Cal MediConnect-ի *Անդամների տեղեկագիրքը:*
- Այս Հասցեագրքում որոշ ցանցի դեղատներ միգուցե թվարկված չեն:
  - Որոշ ցանցի դեղատներ, հնարավոր է՝ ավելացվել կամ հեռացվել են մեր ծրագրից այս Հասցեագիրքը հրապարակելուց հետո:

Ձեր տարածքում Health Net Cal MediConnect-ի ցանցի դեղատների մասին ամենաթարմ տեղեկությունները ստանալու համար, խնդրում ենք այցելել mmp.healthnetcalifornia.com կայքը կամ զանգահարել Անդամների ծառայությունների բաժին 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է:

Ձեր դեղատոմսերի ապահովագրության ամբողջական նկարագրությունը ստանալու համար, ներառյալ, թե ինչպես ստանալ ձեր դեղատոմսերը, խնդրում ենք ընթերցել *Անդամների տեղեկագիրքը և* Health Net Cal MediConnect-ի *Ապահովագրված դեղերի ցուցակը:* Դուք կարող եք դիտել դեղերի ցուցակը մեր կայքում՝ mmp.healthnetcalifornia.com:

## D1. Ինչպես որոշել Health Net Cal MediConnect-ի ցանցի դեղատները

Մանրածախ դեղատներից բացի՝ ձեր ծրագրի դեղատների ցանցը ներառում է.

- Փոստով պատվերի դեղատներն անդամներին են ուղարկում ապահովագրված դեղատոմսային դեղեր փոստի կամ առաքող ընկերությունների միջոցով:
- Տնային ներարկման դեղատները նախապատրաստում են դեղատոմսային դեղեր, որոնք պետք է ներարկվեն երակից, մկանից կամ որևէ այլ, ոչ-բերանային եղանակով տանը՝ վերապատրաստված մասնագետի կողմից:
- Երկարատև խնամքի (LTC) դեղատները սպասարկում են երկարատև խնամքի հաստատությունների բնակիչներին, օրինակ՝ ծերանոցում:
- Մասնագիտացված դեղատներն անդամներին են տրամադրում դեղեր, որոնք բուժում են բարդ կամ հազվադեպ քրոնիկ վիճակներ, օրինակ՝ քաղցկեղ, ռևմատոիդ արթրիտ, հեմոֆիլիա, ՄԻԱՎ:

Կարիք չկա, որպեսզի շարունակեք գնալ նույն դեղատունը՝ դեղատոմսը լրացնելու համար:

## D2. Դեղատոմսերի երկարաժամկետ պաշարներ

- **Փոստով պատվերի ծրագրեր:** Մենք առաջարկում ենք փոստով պատվերի ծրագիր, որը կօգնի ձեզ ստանալ ձեր դեղատոմսային դեղերի մինչև 90 օրվա պաշար՝ անմիջապես ձեր տուն առաքումով: 90 օրվա պաշարի համար կիրառվում է նույն համավճարը, ինչպես մեկ ամսվա պաշարի համար:

- **90 օրվա մանրածախ դեղատան ծրագրեր:** Որոշ մանրածախ դեղատներ նույնպես կարող են առաջարկել ապահովագրված դեղատոմսային դեղերի մինչև 90 օրվա պաշար: 90 օրվա պաշարի համար կիրառվում է նույն համավճարը, ինչպես մեկ ամսվա պաշարի համար:

## E. Health Net Cal MediConnect-ի ցանցի դեղատներ

Հասցեագիրքը դասակարգված է ըստ դեղատան տեսակի և գտնվելու վայրի: Դեղատների տեսակները ներառում են մանրածախ և ցանցային, փոստով պատվերի, տնային ներարկման, երկարատև խնամքի և մասնագիտացված դեղատներ: Յուրաքանչյուր բաժնում դեղատները նշված են ըստ վարչաշրջանի, քաղաքի և փոստային դասիչի: Դուք կարող եք այցելել մեր ցանցի ցանկացած դեղատուն, եթե այլ բան նշված չէ յուրաքանչյուր բաժնում:

## E1. Փոստով պատվերի դեղատուն

Դուք կարող եք ստանալ դեղատոմսային դեղերը ձեր տուն առաքումով՝ օգտվելով մեր ցանցի փոստով պատվերի առաքման ծրագրից: Նախքան ձեզ որևէ դեղ առաքելը, դեղատունը պետք է ստանա ձեր հաստատումը:

Դուք կարող եք նաև գրանցվել ավտոմատ փոստով պատվերի առաքմանը: Սովորաբար, ձեր դեղատոմսային դեղերը կարող եք ստանալ 10 օրվա ընթացքում՝ սկսած այն ժամանակից, երբ փոստով պատվերի դեղատունը ստացել է պատվերը: Եթե չստանաք ձեր դեղատոմսով դեղ(եր)ն այս ժամկետներում, եթե ուզում եք չեղարկել ավտոմատ պատվերը, կամ եթե պետք է դեղատոմսերի գումարի փոխհատուցում խնդրեք, որ չէիք ուզել կամ որի կարիքը չունեք, խնդրում ենք կապվել մեզ հետ 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է: Փոստով պատվերի դեղատների մանրամասներին ծանոթանալու համար տես *Անդամների տեղեկագրքի* Գլուխ 5-ը:

## E2. Տնային ներարկման դեղատներ

Տնային ներարկման դեղատները սովորաբար այն բուժառուների համար են, որոնք ստանում են տնային ներարկման բուժում, և կարող են հասանելի լինել ոչ բոլոր անդամներին: Դուք կարող եք այցելել ցանկացած տնային ներարկման դեղատուն մեր դեղատների ցանցում: Մանրամասների համար խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայությունների բաժին 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է:

## E3. Երկարատև խնամքի դեղատներ

Երկարատև խնամքի հաստատության բնակիչները, օրինակ՝ ծերանոցի, կարող են ստանալ իրենց դեղատոմսային դեղերը, որոնք ապահովագրված են Health Net Cal MediConnect-ի կողմից, հաստատության դեղատնից կամ մեկ այլ ցանցի դեղատնից: Դեղերի ապահովագրության հատուկ դեպքերի մանրամասներին ծանոթանալու համար տես *Անդամների տեղեկագրքի* Գլուխ 5-ը:

Երկարատև խնամքի դեղատները սովորաբար երկարատև խնամքի հաստատության բնակիչների համար են, և կարող են հասանելի լինել ոչ բոլոր անդամներին: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է:

## E4. Մասնագիտացված դեղատներ

Մասնագիտացված դեղատներն անդամներին են տրամադրում դեղեր, որոնք կիրառվում են՝ բուժելու բարդ կամ հազվադեպ քրոնիկ վիճակներ, օրինակ՝ քաղցկեղ, ռևմատոիդ արթրիտ, հեմոֆիլիա, ՄԻԱՎ: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect 1-855-464-3571 հեռախոսահամարով (TTY՝ 711), ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին: Նշված ժամերից հետո, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև տոն օրերին, կարող եք հաղորդագրություն թողնել: Ձեզ հետ կզանգահարեն հաջորդ աշխատանքային օրը: Զանգն անվճար է:

# Nondiscrimination Notice

Health Net Community Solutions, Inc. (Health Net Cal MediConnect Plan (Medicare-Medicaid Plan)) complies with applicable federal civil rights laws and does not discriminate, exclude people or treat them differently on the basis of sex, race, color, religion, ancestry, national origin, ethnic group identification, age, mental disability, physical disability, medical condition, genetic information, marital status, gender, gender identity, or sexual orientation.

Health Net Cal MediConnect:

- Provides free aids and services to people with disabilities to communicate effectively with us, such as qualified sign language interpreters and written information in other formats (large print, audio, accessible electronic formats, other formats).
- Provides free language services to people whose primary language is not English, such as qualified interpreters and information written in other languages.

If you need these services, contact the Health Net Cal MediConnect Customer Contact Center at 1-855-464-3571 (Los Angeles County), 1-855-464-3572 (San Diego County) (TTY: 711) from 8 a.m. to 8 p.m., Monday through Friday. After hours, on weekends, and on holidays, you can leave a message. Your call will be returned within the next business day. The call is free.

If you believe that Health Net Cal MediConnect has failed to provide these services or discriminated in another way, you can file a grievance by calling the number above and telling them you need help filing a grievance; the Health Net Cal MediConnect Customer Contact Center is available to help you.

You can also file a civil rights complaint with the U.S. Department of Health and Human Services, Office for Civil Rights, electronically through the Office for Civil Rights Complaint Portal, available at https://ocrportal.hhs.gov/ocr/portal/lobby.jsf, or by mail or phone at: U.S. Department of Health and Human Services, 200 Independence Avenue SW, Room 509F, HHH Building, Washington, DC 20201, 1-800-368-1019 (TDD: 1-800-537-7697) if there is a concern of discrimination based on race, color, national origin, age, disability, or sex.

Complaint forms are available at http://www.hhs.gov/ocr/office/file/index.html.

# Multi-Language Insert

**Multi-language Interpreter Services**

**English:** ATTENTION: If you do not speak English, language assistance services, free of charge, are available to you. Call 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Spanish:** ATENCIÓN: Si habla español, tiene a su disposición servicios gratuitos de asistencia lingüística. Llame al 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Chinese Mandarin:** 注意：如果您使用繁體中文，您可以免費獲得語言援助服務。請致電 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711)。

**Chinese Cantonese:** 注意：如果您說中文，您可獲得免費的語言協助服務。請致電 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego)（TTY: 711）。

**Tagalog:** PAUNAWA: Kung nagsasalita ka ng Tagalog, maaari kang gumamit ng mga serbisyo ng tulong sa wika nang walang bayad. Tumawag sa 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Vietnamese:** CHÚ Ý: Nếu bạn nói Tiếng Việt, có các dịch vụ hỗ trợ ngôn ngữ miễn phí dành cho bạn. Gọi số 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Korean:** 주의 : 한국어를 사용하시는 경우 , 언어 지원 서비스를 무료로 이용하실 수 있습니다 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711). 번으로 전화해 주십시오 .

**Russian:** ВНИМАНИЕ: Если вы говорите на русском языке, то вам доступны бесплатные услуги перевода. Звоните 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Arabic:** ملحوظة: إذا كنت تتحدث العربية، فإن خدمات المساعدة اللغوية تتوافر لك بالمجان. اتصل بالرقم 1-855-464-3571 (Los Angeles)، 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Hindi:** ध्यान दें: यदि आप बोलते हैं तो आपके लिए मुफ्त में भाषा सहायता सेवाएं उपलब्ध हैं। 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711). पर कॉल करें।.

**Japanese:** 注意事項：日本語を話される場合、無料の言語支援をご利用いただけます。1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711). まで、お電話にてご連絡ください。

**Farsi:** توجه: اگر به زبان فارسی گفتگو می کنید، تسهیلات زبانی بصورت رایگان برای شما فراهم می باشد. با 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Thai:** เรียน: ถ้าคุณพูดภาษาไทยคุณสามารถใช้บริการช่วยเหลือทางภาษาได้ฟรี โทร 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Armenian:** ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Եթե խոսում եք հայերեն, ապա ձեզ անվճար կարող են տրամադրվել լեզվական աջակցության ծառայություններ: Զանգահարեք 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711)

**Cambodian:** ប្រយ័ត្ន៖ បើសិនជាអ្នកនិយាយ ភាសាខ្មែរ, សេវាជំនួយផ្នែកភាសា ដោយមិនគិតឈ្នួល គឺអាចមានសំរាប់បំរើអ្នក។ ចូរ ទូរស័ព្ទ 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Hmong:** LUS CEEV: Yog tias koj hais lus Hmoob, cov kev pab txog lus, muaj kev pab dawb rau koj. Hu rau 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

**Punjabi:** ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇ ਤੁਸੀਂ ਪੰਜਾਬੀ ਬੋਲਦੇ ਹੋ, ਤਾਂ ਭਾਸ਼ਾ ਵਿੱਚ ਸਹਾਇਤਾ ਸੇਵਾ ਤੁਹਾਡੇ ਲਈ ਮੁਫਤ ਉਪਲਬਧ ਹੈ। 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ।

**Laotian:** ໂປດຊາບ: ຖ້າທ່ານເວົ້າພາສາອັງກິດ, ການຊ່ວຍເຫຼືອດ້ານພາສາທີ່ບໍ່ເສຍຄ່າມີພ້ອມໃຫ້ທ່ານ. ກະລຸນາໂທ 1-855-464-3571 (Los Angeles), 1-855-464-3572 (San Diego) (TTY: 711).

Այցելեք ***mmp.healthnetcalifornia.com/findadoctor***
ամենաթարմ տվյալների համար: